

ԲԱՆԵԱՍԻՐԵԿԱՆՆ

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆԻ ՊԱՏԱՍԻԱՆԻՆ

ՊԱՏԱՍԻԱՆ

Այստեղից հետևում է որ «փոքր ի շատէ» տեղ չունի եղնիկի և ոչ եփրեմի թարգմանչի անհատական բառարանում, ինչպէս օր. «պլան», «գործուղի» և նման բառեր մնում են օտար այն թիւթերի ու բոնք յիշում են այդ բառերը իրենց մէջ-բերումներում:

Աւելի հետաքրքրական է Ոսկերբանի Սա ևս յիշում է Առաքեալի՝ «փոքր ի շատէն խափանեցի» (Ա. Կորն. ԺԳ. 10) Մատթէոսի մեկնութեան մէջ (Ա. էջ 247): Բայց Բ. Կորն. Բ. 5 և Հռովմ. ԺԱ. 25 կոչումներն մէջ «փոքր ի շատէ»-ի փոխարէն գրաւնում ենք «ի մասնէ»։ «զի կուրութիւն ի մասնի եղև խորայէլի», քանի մի տող դատուե՝ «թէ ոք տրամեցոյց, ոչ եթէ զիս տրամեցոյց այլ ի մասնի ինչ, որպէսզի մի ծանրացայ ձեզը» (Ոսկ. Պաւլ. Բ. էջ 286):

Ոսկերբանի մօտ սուրբգրեանական կոչումները ընդհանրապէս համաձայն են մեզ հասած Ս. Գրքի բնագրին, բայց կան և շեղումներ որ շատ նշանակալից են: Տեղը չէ այս խնդրով զբաղիլ: Գաղափար տալու համար բերենք մի օրինակ հէնց Աւետարանի սկզբից (Մատթ. Բ. 16): «և առաքեաց կոտորեաց զամենայն մանկունս որ էին ի Բեթղաւէմ և յամենայն սահմանս նորա յերկմանից և ի խոնարհ, ըստ ժամանակին զոր ստուգեաց ի մոգուցն»: Ոսկերբանի մօտ, «և առաքեաց և կոտորեաց զամենայն մանկսն զոր եղիս ի Բեթղաւէմ և յամենայն սահմանս նորա յերկմանից և ի խոնարհ, ըստ ժամանակին սրպէս եւ ըստ ստուգեաց ի մոգուցն» (Ոսկ. Մատ. Ա. էջ 124):

Եթէ Եղնիկն է Ս. Գրքի սրբագրողը և Ոսկերբանի թարգմանիչը, անհասկանալի են այս տարբեր ընթերցումները: Աւելի ակնբախ է Ոսկերբանի կոչումը. «ի Յիսուսի ծնանելն ի Բեթղաւէմ Հրէաստանի յաւուրս Հերովդի արքայի, անաւասիկ մօգք յարեւելից եկին յերուսաղէմ, ասեին, ուր իցի նաւածիկն արքայն հրէից»:

Այս կարգի շեղումները ընդունուած

բնագրից տանում են այն ենթագրութեան որ ընդունուած բնագրերը, Սահակի և Եղնիկի սրբագրութիւնից յետոյ, ենթարկուել է նորէն սրբալրութեան:

Հանգուցեալ եղիչէ պատրիարքը (Դուրեման) համեմատելով Եղնիկի մի քանի վերկայութիւնները գտել էր որ նրանք ևս համաձայն չեն Ս. Գրքի այժմեան ընթերցումներին, և այս առթիւ նկատում է ներբորէն, իրաւ է որ Եղնիկ սրբագրած լինի Ս. Գրքը, և կամ Եղնիկ արդեօք հեղինակ է իր գործին (Դուրեման Մատենադարան, թիւ 7, էջ 367):

Համեմատութիւնները չէ սպառած Հ. Եղիչէ: Յիշենք մեր կողմից Եղնիկի մի տեղիքը, ուր բերում է Առաքեալի խօսքը՝ «թէ զգորս յառաջագոյն ճանաչէր, յառաջագոյն սանմանեաց կերպարանակից լինել պատկերի որդոյն իւրոյ», որ ակնարկ է Հռովմ. Ը. 29. «գորս յառաջն ճանաչէր, յառաջագոյն հրաւիրեաց կերպարանակից լինելու ևս»:

Վատաշափոյն սահմանեաց համաձայն է յոյն բնագրի՝ περὶ ὧν, մինչդեռ ուղղուած է «հրաւիրեաց», երկու յառաջագոյններից մէկը՝ շինած է «յառաջին», ինչպէս վերին՝ «ի Յիսուսի ծնանելն» = τοῦ Ἰησοῦ γεννηθέντος, չըլած է «ի ծնանելն Յիսուսի»: Սրբագրութիւնների նպատակն է եղել աւելի հայացնել, աւելի զիւրաքնել:

Արդ մեր տպագրութիւն է եղել որ այս կարգի սրբագրութիւն է նաև «փոքր ի շատէ» փոխան «ի մասնէ», որ զիպուածօրէն պահուել է Ոսկերբանի մօտ: Արդարեւ ինչու Ոսկերբանի թարգմանիչը «փոքր ի շատէ» յիշելուց յետոյ, պիտի գրէր «ի մասնէ» եթէ «ի մասնէ» չկար Ս. Գրքի հայ բնագրում, այլ կար «փոքր ի շատէ» ձևաւորէ որ սրբագրութիւնից յետոյ է որ գրիչները մոռնել են նոր ընթերցումը Ոսկերբանի և Եղնիկի կոչումների մէջ: Այս և նման դիտողութիւնների ազդեցութեամբ էր որ նկատել էինք անցողիկի որ «փոքր ի շատէ» Եղնիկեան չէ և ոչ սուրբգրեանական: Մենք դատական վճիռներ չենք տալիս, բանասիրական խոհեր են որոնց առթիւ, օրքան և անհաւանական համարին Հ. Ա. և ուրիշներ, պէտք է ատամների կրճատել, այլ ձեռքը ձկնափորն դնել և աշխատիլ կնճիռները լուծել:

Քարգամանել: Նշանադրութի միատող յիշատակարանը՝ «Եղիցի յիշատակ Եղնկան ի թարգմանել զգիրս զայս», արգելք է Հ. Ա. տեսութեան: Ուստի և ձգտում է վարկաբեկել և թեկն տակ առած՝ ցատկում է եօթնհորդ դարից տասնեքեքորդ դարը, կարծում է որ յիշատակարանը մի մաղթանք է, որ արել է ձեռագրի վարդան գրիչը 1254 թ. ընդօրինակութիւնն աւարտելուց յետոյ: Սակայն յիշատակարանը ձեռագրի վերջում չէ, ինչպէս վերև յիշեցինք, այլ կնքում է նշանագիրը: Ապա հետևում է «Ժամանակը կաթողիկոսաց» և յետոյ վարդան գրչի յիշատակարանը: Կաթողիկոսների ցուցակում կոմիտասի հայրապետութեան տարեթիւր չէ նշանակում: Այստեղից ուզեցել էինք հետևեցնել որ ցուցակի առաջին մասը թերեւս նոյն Նզնիկի գործ լինի, որ Նշանագիրը կազմելուց յետոյ հանդերձ իր յիշատակարանով, շարել է կաթողիկոսների անունները մինչև իր ժամանակ, չարել է ինքը կամ ժամանակակից մի ընդօրինակող: Մի ուրիշը շարունակել է ցուցակը մինչև Ստեփանոս, ութերորդ դարու վերջը: Նշանակում է այս անձանթը ապրում էր Ստեփանոսի յաջորդի օրով: Ուրեմն ցուցակը վարդան գրչի գործը չէ: Այս նպատակով էր որ ձեռագիրը նկարագրելու աշխատեցինք պարզել թէ ցուցակը լրիւ է արդի ձեռագրում թէ թուով է ընկած: Վարդանի գործը չէ ևս առաւել ցուցակից յառաջ գետեղուած՝ Նզնիկի յիշատակարանը:

«Թարգմանել» բառը ևս չի կարող իշխեցնել յիշատակարանը մինչև վարդանի ժամանակը: Հ. Ա. կարծիքով թարգմանել օյորինել իմաստով առաջին անգամ Հերաքլին է գործածել 1184 թ. յետոյ Սմբատ սպարապետ իր Տարեգրքում 1272 թ.: Գտնում է որ այս տարիների միջև 1254 թ. վարդան ընդօրինակած է ձեռագիրը և գործածած նոյն բառը նոյն իմաստով: Սխալ է այս կարծիքը իր հիմքերով: Հերաքլին վկայում է որ իր գործը քաղել է արար, պարսկ և յոյն գրքերից և ուրեմն իրաւունք ունէր ասելու «հաւաքեցի և թարգմանեցի ի հայ բարբառ»: Օգտուել է նաև հայ նիւթերից եւ կամեցել այս բոլորից «առնել գիրքս», ուստի և ասում է՝ «Թարգմանեցաւ և գրեցաւ գիրքս»: «Թարգմանել»

գործ է ամած իր բուն իմաստով, և ոչ թէ որպէս «օյորինել»:

Սմբատի Տարեգիրքը երեք քառորդ մասով քաղուած է Ուսուցիցուց և Գրիգոր երէցից. մի, և վերջին քառորդն է միայն իրենը: Նզնիկի գործը ևս նոյն բնաւորութիւն. մեծ մասը քաղուած է հին աղբիւրներից և իրեն գրչի սեփականութիւն է գրեթէ միայն Հովսէփսմեանց հատուածը: Սմբատ իրեն անուանում է երկիցս «թարգմանող պատմութեան»: Նզնիկ ևս նոյն բառով է որակում իր գործը: Ի՞նչ է բարի իմաստն այս գէպը:

Ննեքի մօտ թարգմանութիւն նշանակում է նաև մեկնութիւն: Թւում է թէ այս իմաստը պարզ հետևութիւն է յունարէնի, որ *ἐρμηνεία* նշանակում է մեկնել և թարգմանել:

Բիւզանդական շրջանում, ինչպէս եւ նոր յունարէնում, *ἐρμηνεία* պահում է միայն մեկնութիւն իմաստը: «Թարգմանել» արտայայտում է *μεταφράζω* բառով, որ դարձեւ երկու իմաստ ունի՝ paraphraser, եւ թարգմանել: Յունարան դպրոցը թարգմանել է այս բառը՝ յարանել որ, սակայն, մեծ ընդունելութիւն չէ գտել: Կարծում եմ որ յոյն *μεταφράζω* բառի հետևութեամբ, «Թարգմանել» բառը գործ է ամուսնացնում նաև paraphraser-ի իմաստով:

Արդ Նզնիկի աշխատութիւնը մեծ մասով *μετάφραζεις*, paraphrase է, և ուրեմն կարող է ասել՝ թարգմանել: Սմբատի Տարեգիրքը ևս *μεταφράζεις* է. և ինքը՝ թարգմանող, *μεταφραστής*:

Ջուրափակ: Հ. Ա. կասկածում է թէ Կաղանկատուացին առած լինի այս բառը Ագաթանգեղոսից: Մենք մնում ենք մեր կարծիքին: Ոչ միայն բառեր, այլ ամբողջ նախադասութիւն է քաղել Ագաթանգեղոսից, ինչպէս՝ «ասպնջական ցանկալի սուրբ հաւատացն լինելով յաշխարհածնունդ հայրենեացն որդի գտանիւր շնորհացն (sic) Աստուծոյ մերձաւոր կենարար կենացն լինելով» (էջ 381): «Պարտոյնս որմոյն Կաղանկատուացու մօտ (էջ 351) այլ բան չէ քան Ագաթանգեղոսի պարկէնը», չփոթած պարոյկի հետ, եթէ միայն գրչագրական սխալ չէ:

Փառնեւեհ: Հ. Ա. յամառում է իր անօրինակ սրբագրութեան վերայ. Փառ-

ներսեն անունը որպէս թէ ծագած է Փառէն ոմն երէց բառերի սխալ ընթերցումից: Ինչո՞ւ Փառէն պիտի Փառներսեն դառնար: Կարց է տալիս Հ. Ա.: Իսկ ինչո՞ւ Կորիւնի Մաշթոց դարձել է Եզնիկ երէցի մօտ Մեհաբաւալ: Հ. Ա. աւելիլ հետու է գնում, երբ պնդում է որ Փառներսեն չէ կարող պահլաւ անուն լինել, և որ պահլաւ բառակազմութեան օրէնքը պահանջում է ներսեն-Փառէն: Այդպիսի օրէնք չկայ: Գէթ յիշէր այնքան զօրեղ յիշողութեան տէր բանասէրը Փաւստոսի՝ Փառնաւազ = Սերէոսի՝ Փառնաւազ = արեւ մտեան հեղինակները՝ Փարպաձաճ, Փառանձեմ էլ չեմ աւտւում յոյն հեղինակները՝ Փարպաձաճ, Փարպաձաճ և ուրիշներ որ գիրութեամբ կարող էր գտնել իր Iranisches Namensbuch յայտնի գրքում: Յիշենք նաև Սերէոսի՝ Քորիս-Որմիզդ, Քորենացու՝ ինտոխրուտ ուր խոյս մի այլ նշումն է փառն-ի, կամ Farrux-Sapuh, ուր farrux դարձեալ նոյն փառն բառի այլ ձևն է:

Յուսիկ = Սահակ = Շահակ: Կամակոր մօտքի մի ուրիշ օրինակ, երեք հիմնովին տարբեր անունների նոյնացման դէմ կարելի է միայն երեք անգամ օջէն ասել: Հ. Ա. կարծիքով, Սահակ անունը Կործայազում արտասանւում էր Շահակ ասորական ազգութեան տակ, իսկ ճակ ընդէ տղու վուրդին բերանը սեղմուած եղած է Յուսիկ: Ոչ, որքան կ'ուզէք սեղմեցէք բերանը Սահակից՝ Յուսիկ չի գուրս գալ: Բերան սեղմելով չի կարելի բառեր մեկնել և ո՛չ էլ բերան լայնելով՝ սխալ մեկնութիւններ պաշտպանել: Հ. Ա. ժամանակ է գտել թերթիւն Հիւրքման, ուր տեսել է որ այս լեզուագէտ Շահակ անունը զգուշօրէն կը կապէ իրանական շահ բառի հետ, իսկ «տաքէն չի անցներ Շահրիկ, Շահէն անուններու հետ համեմատել: Իսկ Հիւրքման մտքէն կ'անցնէ՞ Շահակը հանել Սահակ-ից: Այս է խնդիրը: Սահակ անգամ Եփրեմի թարգմանութեան մէջ մնացել է միշտ Սահակ:

Ինչ կը վերաբերի Սահակի ստուգաբանութեան, ահա ինչ է ասում մի ուրիշ հեղինակուոր անձ. "Shahak = pers. Shahak (etwa zu Shahpuhr) oder besser Shahrak (Hypothese eines mit Shahr = ap. Shahr "Herrschaft, Zusammengesetzten Namen", J. MARQUART, *Philologus*, Bd. 55, p. 240):

Անտիգէ և և իր հեջնտո նկատողութիւնը

Շահրիկ-ի վերաբերեալ, Շահրիկ նշանակում է կողմնապետ, բայց է հ'ւ յատուկ անուն (HOFFMAN, *Onomasticon aus Syrischen Wörtern*, p. 72), ինչպէս Շահապ է սատրապ, բայց նաև յատուկ անուն է՝ Փաւստոսից յայտնի (ճեպիսկոպոս Տայոց Կիրակոս որ Շահապ կուչէր): Դեհկան ևս կողմնապետ է նշանակում, բայց նաև յատուկ անուն է նոյն Փաւստոսի մօտ ինչ վերաբերում է միւր համեմատութեան Շահակ և Շահրիկ, ահա ինչ է մտածում Նշանաւոր իրանագէտը. Der Name Shahrak scheint eigentlich Kreisvorsteher zu bedeuten und mit Shahrigh gleich zu sein (INSTI, *Iranisches Namenbuch*, p. 277): Պարզ է:

Արբանակ: Եզնիկ երէց իր գործի ընթացքին յիշատակում է Սահակի և Մեսրոբի աշակերտներից, Ղևոնդ, Արծան, Կորիւն և Եզնիկ, անուանելով նրանց արբանակի մոցում լուսաւոր հանդիսից: Եզնիկի անունը պարզապէս աքացում է Հ. Ա. մօլար կարծիքի դէմ և պաշտօնացանում որ ճանապարհ հեղինակ Եզնիկ երէցը չի կարող նոյնը լինել Կողբացու հետ: Հ. Ա. փորձում է վերացնել այս խոչընդոտը, յայտարարելով այն անհրաժեշտ. Իբր թէ ճարանակ և հանդէսք բառերը գործ են ածուած ոչ-գասական առումով: Այստեղից, կարծեմ, մի բան է հետևում որ նշանագրի հեղինակը չէ կարող լինել գասական Կողբացին, և ոչ թէ որ յիշեալ խօսքերը անվաւերական են: Թողնենք որ նկատողութիւնն ինքը սխալ է: Հ. Ա. ի չարն է գործ գնում իր «գասական քիմքն» ներշնչումները: Կորիւն իրեն կոչում է «արբանակ ըստ աւետարանական հրամանաց» Սահակի եւ Մաշթոցի (էջ 47): Խեղճ Եզնիկ երէցը կըրկնում է նոյնը նաև Կորիւնի ընկերակիցների՝ Ղևոնդի, Արծանի և Եզնիկի նկատմամբ և անշուշտ հետեւելով Կորիւնին: Եզնիկ երէց համարում է Ղևոնդին «ճշմարիտ ի գործ մշակութեան», որ ոչ այլ ինչ է եթէ ոչ Կորիւնի՝ «աստուածագործ մշակութիւն»:

Հ. Ա. փորձում է հերքել մեր տեսակէտը Հռիփսիմեանց հատուածի վերաբերեալ: Ի հարկէ չի հրաժարում այստեղ ևս նորանոր և անհանդուրժելի սրբազրութիւններ առաջարկելուց: Արդև ուղղում է Արարհամ, Կամովէլ՝ Սամուէլ որպէս ինչ նոյնացնի 607 թուին յիշուած վանաց երէց-

ների հետ։ Զանազանութիւն չէ տեսնում եզնիկի և Սերէոսի խնդրին հայող պատմութեան մէջ։ Սերէոսի՝ ՉԵՐ տարին խորովի ուղում է հաշտեցնել եզնիկի՝ ՉԵՐ տարու հետ, մէկը՝ շինութեան սկիզբը համարելով, միւսը՝ աւարտումը։ Եւ անքան միաւ միտ է որ կարծում է թէ Հռիփսիմիանց տաճարի նման մի չէնք կարիլի է աւարտել «գրիթէ յընթացս մէկ տարուոյ», և այն էլ երևանի դաշտում ուր տարուան մէջ հազիւ 5-6 ամիս նպաստաւոր է շինութեան համար։ Թուերի տարբերութիւնը այստեղ նոյն տեսակի է ինչ որ նկատուում է Սերէոսի և Գիրք Թղթոցի տուեալներին մէջ 607 թուի ժողովի մասին։ Ըստ Գիրք Թղթոցի ժողովը կայացել է խորովի 17րդ ամսին, մինչդեռ Սերէոսի ասելով, Սմբատ, որի հըրամանով ժողովը գումարուել էր, վերադարձել է Պարոկաստանից 18րդ ամսին։ Թեթեան ճանշտութիւններ են։ Հարկաւ, կարելի է, թիրեաւ, ժէ և ԺԼ սրբագրել մէկը միւսով, բայց դժուար է նոյնն անել ԻԼ և ԻԹ նկատմամբ։ Վերջապէս եթէ մէկը յիշում է շինութեան սկիզբը, միւսը՝ վերջը, ինչպէս կարծում է Հ. Ա. արանով վերանում է հակառակութիւնը, բայց ո՛չ աղբիւրների տարբերութիւնը, թո՛ղ որ Հ. Ա. մեկնութիւնն ինքնին չէ համապատասխանում իրականութեան։

Եզնիկի՝ խառնակը յօդից բնաւ նոյնանիչ է Սերէոսի՝ «յօշակ ի միմեանցի», այլ բոլորովին հակառակը։ «Ճառնակը» բառի իմաստը պարզելու համար պէտք է զիմել սուրբգրեանական հետեւեալ տեղերին։ Պաւղոս առաքեալ համեմատում է Եկեղեցին մարդկային մարմնի հետ ուր գանազան մասերի ներդաշնակօրէն շաղկապուած՝ կազմում են մի միութիւն։ «ամենայն մարմին յաւիւրք եւ խաղաեօք տարաբերեալ եւ խառնեալ աճէ» (Կող. Բ. 19), ուր խառնեալ = յոյն σμικρὰ καὶ μέγαν. դարձեալ, ամենայն մարմին յօդեալ և պառօսանեալ ամենայն խաղաեօք տարբերութեան» (Եփ. Դ. 16)։ Այստեղ պատշաճեալ = նոյն σμικρὰ καὶ μέγαν. Ոսկերեան իր մեկնութեան մէջ առաջին գէպըում գործ է ածում՝ «քնդ միմեանս յարեալ» (էջ 593), երկրորդ՝ «հաստատեալ» (էջ 792)։ Եփրեմ ևս ունի հաստատել (էջ 148)։ Նոյն իմաստը բառի տեսնում ենք նաեւ Ելից ԻԶ. 11, «և արասցես օղս պղնձիս յիսուն և խտնեցես զօղն ընդ ճար»

մանդան և կցեացես զփեղան և եղիցին միս։ Ընդգծուած բառերը հոմանիշ են և թարգմանութիւն միեւնոյն յոյն բառի՝ συνάφεις։ Ասել է թէ «խառնակը յօդից ող է անքակը» նշանակում է՝ «խառնուած մարմնոյն յօդիւք կայր ող է անքակը»։ ուրիշ խոսքով, Հռիփսիմէի մարմինը քայքայուած չէր, և հանդերձն անգամ չէր փտել։

Սերէոս աչքի առջև ունի Ազաթանգեղոսի՝ «յօշէին զնա անգամ անդամ» (էջ 107) և ասում է որ Կոմիտաս «ոչ համարձակեցաւ բանալ» պատանը, այլ բաւականացաւ օկնքել իւրով մատանեաւ Ս. Գրիգորի և Ս. Սահակի նման։ Մինչդեռ Եզնիկի՝ «նու վին հանդերձով ակնարկ է Ազաթանգեղոսի մի ուրիշ տեղիքի, ուր Ս. Գրիգոր զգմի մի իւրաքանչիւր ի սրբոցն առեալ յիւրաքանչիւր արկեղ գնէր՝ իւրաքանչիւր հանդերձով» (էջ 394)։ Եզնիկ ոչ միայն տեսել է, այլ և շօշափել իր ճեղով, որ մարմինը ող է անքակ էր ուստի և ասում է՝ «արդեօք անհաւաստելի թուիցի զկնի մեր Թէկեղոց»։ Թէ միայն տապանը շօշափած լինէր, ինչպէս կարծում է Հ. Ա., զարմանալու ի՞նչ կար հետնորդների համար։

Բայց սրանից Սերէոս չգիտէ որ Կոմիտասի օրով Հռիփսիմէի վանահայրն էր Կամովէղ։ Գաթնեան ուղեցել է ուղղել Սամուէլ, երևի, ինչպէս նկատել էինք, ենթադրելով որ 607 թուին ժողովին ներկայ Սամուէլն է, Հռիփսիմէի վանահայր։ Այստեղից Հ. Ա. նոր եղբայրացութիւններ է հանել, և նոր աւերածոյ սրբազրութիւն կատարել Եզնիկի ընազրի մէջ։ Սակայն Կամովէղ հաստատապէս այլ անձ է քան Սամուէլ։ Յայտնի է Կոմիտասի արձանագրութիւնը. «Եւ, Կոմիտաս, եկեղեցապան Սրբոյ Հռիփսիմէի, կոչեցայ յաթոռ Սրբոյն Գրիգորի. շինեցի զտաճար որբոց վկայից» Գրիգորի։ Սամուէլ Կոմիտասից յառաջ էր վանահայր Ս. Հռիփսիմէի, 607 թուին, իսկ Կամովէղ նրա յաջորդն է նոյն պաշտօնում, 618 թուին։ Անունն օտարոտի է։ Հաւանաբէն նոյնն է ինչ որ Ս. Գրիգոր յայտնի Կամուէլ կամ Կամիւրջոյի («յարեաւ Յիսուս») պէս մի անուն։

Արեղս անուն ևս ուղեղոււ չէ Արբահամ, ինչպէս իրեն թոյլ է տուել Հ. Ա.։ Զեռագիրը շատ պարզ է և ոչ մի կասկածի տեղիք չէ տալիս։ Վերջին տառի մի ստեղծ

մաշուած է և նորոգող լրացրել է այնպիսի զգուշութեամբ որ ստեղծ կէտի նման է և Ն. Ա. հայ եկեղեցական անունները մէջ չի գտել Արդլա, ուստի և սրբազրիսու պէտք է տեսել Այս բնաւ բանաւոր պատճառ չէ և Քրիստոզմ անունն ևս չի պատահում ոչ եկեղեցական և ոչ աշխարհական անունների մէջ, Բայց անա այդ անունն երևան է գալիս Անիի 622 թուի արձանագրութեան մէջ, ուրեմն մեր Եզնիկ երէցի օրով Արիսողոմ սխալմամբ Աբրահամ են կարդացել շատ շատերը և այդպէս էլ տեսնում եմ Հ. Գալեֆիկի Պփարտէզ հայ հնագրութեան աշխատութեան մէջ, բայց ստոյգ ընթերցումն է Արիսողոմ: Ուրանա՞նք, ուրեմն, արձանագրութիւնը և կամ սրբազրե՞նք Աբրահամի: Արդլայի գոյութիւն չափոյ մէջ Շմուէլի և Բրքիւրդի դարում զարմանալի չէ, մանաւանդ որ հասարակ անունն է և Ասորական Արգլահայի սղումն է. իսկ Արդլահան երէց էր որ նահատակուեց Արդիւոյ և Արդա եպիսկոպոսների հետ 374 թուին: Սրանք ընդունուած են և մեր Յայտմաւորքներում և մինչև անգամ հին օրացոյցներում:

Հ. Ա. միայն Արդլա անունը չէ սրբազրել, այլ մի ամբողջ նախադասութիւն, աղաւաղելով ընազիրը:

Եզնիկ երէց պատմում է Հռիփսիմեանց նշխարների բացումը Ս. Սահակի օրով եւ կնքում իր խօսքը ասելով. «Եւ եղև այս ի յամ Արդլայ վանաց երիցու սրբոյ Վաղարայաս քաղաքի (:) մինչև յաւուր Կոմիտասայ, Սրբոցն Հռիփսիմեանց սպասաւորի» (**) և այլն: Փակագծի մէջ առած վերջաւորութիւնն ինչպէս տալով, կարծել էինք որ նախադասութիւնն այդտեղ վերջանում է: Այստեղ տեսնում ենք որ վերջակէտը ջնջուել է: Պատճառը տեղի է ունեցել նախ քան Կոմիտաս, որի օրով պատահած նոյնանման գէպքը պիտի պատմէ, այն է նշխարների վերստին բացումը տաճարի վերաշինութեան ժամանակ, երբ Յովանիկ վանահայր էր կաթողիկէի և Կամովէղը՝ Հռիփսիմի:

Ամէն ինչ կանոնաւոր է և անկարծ մեկնութեան:

Սակայն Հ. Ա. ուզում է անպատճառ Արդլա կարգաւ Աբրահամ որպէսզի նոյնացնի նրան 607 թուի Աբրահամի հետ: Այս ձախող միտքը տանում է նրան գէպի մի նոյնպէս ձախող բնագրային շեղումի, որպէս թէ «Եւ եղև այս ի յամ Արդլային է սկիզբը Կոմիտասի անուանածի. և հետեւապէս Արդլա՝ խեղաթիւրած Աբրահամ էր երէց կաթողիկէի» Կոմիտասի նորոգութեան ժամանակ:

Սակայն կասկածից դուրս է որ «Եւ եղև այս» վերաբերում է Սահակի հատուածին և ոչ Կոմիտասի: Վերջինիս օրով կաթողիկէի վանահայրը Յոհանիկ էր և ոչ երևակայական Սբրահամ: Այս իր հակասութիւնը վերացնելու համար Հ. Ա. յայտարարում է որ Աբրահամ մեռել էր 618-619 տարիների ընթացքին եկեղեցու շինութեան աւարտելէն յառաջ, իսկ 616-617, այսինքն խոսքով շէտարին, ուրեմն Աբրահամը տակաւին կենդանի էր, մինչդեռ, ըստ Սերէոսի, այդ տարին կաթողիկէի վանահայրը Յոհանիկն էր:

Այս կարգի սրբազրութիւնները յարգել չենք կարող և կարծում ենք որ ապատու ջինքն էլ իր որդւ սահմանն ունի և պիտի ունենայ:

Եզնիկ և Սերէոս քաղել են ըստ Հ. Ա. իրենց հաղորդագրութիւնը Հռիփսիմի մասին Վրթանէս Բերթողի գրուածքից: Եզնիկ պատմում է որպէս ականատես և ուրեմն անկախ է որ և է տարիւրից: Բացի սրանց կասկածով ենք վերաբերում որ Վրթանէս Բերթող այդպիսի մի գործ ունենար, որով հետեւ Վրթանէս մեռած էր Կոմիտասի կաթողիկոսանալուց յառաջ: Մեր այս մտքի դէմ խոտոռում է Հ. Ա. և ապացոյցներ պահանջում: Վրթանէս տեղապահ էր Սովսէսի մահուանից յետոյ և իր ժամանակի ամենակարկառուն գէմքը հայ եկեղեցական նութեան մէջ: Առաջինն է որ հաւաստիօրէն կրում է Գերթող՝ այնքան բովանդակալից անունը, որ վկայում է իր բարձր գիտութիւնը: Անվեներ ճակատից քաղկեք գոնականների վտանգաւոր յորձանքի դէմ, որոնց գլուխն էր փառատունչ և ուկազանց Կիրլոն, պաշտպանեց հայրենի աւանդները հայրապետական աթոռի թափութեան ժամանակ: Վաստակաւոր գէմք էր և միակ արժանաւոր թեկնածու Լուսաւորչի գահին:

(*) Հ. Ա. բերում է Յով. Կթ. անունը կողացուցակից. «Տէր Կոմիտաս... ի շինաւանէ վալարանի Սրբոյն Հռիփսիմի»: Զարմանալի է որ սրբազրութեանց այնքան սիրահար բանասէրը չէ նկատել որ «Ինքան սրբազրելու է Բիմալ»:

Եթէ 607 թուին չընտրուեց, պատճառը Սմբատ Բագրատունի իշխանի հաշտարար քաղաքականութիւնն էր: Անշտականներին մուրրութիւնից յետ բերելու համար Սմբատ մեկուսացրեց Վրթանէսին, որպէս պայքարի մէջ չընտուած հակառակորդներին կողմէն անընդունելի անձն, և ընտրել տուեց Արարամի պէս անգոյնի եկեղեցական: Վերթանէս մնաց իր դիրքում, որպէս խորհրդ-գական եւ Սմբատի եւ Արարամի: Հոր-կաւ, Սմբատի յոյսերը չարդարացան, անշտականները, արտաքին ոյժերի ազդեցութեան տակ, ընտրեցին մի այլ կաթողիկոս: Սմբատ Պարսկաստան կոչուեց: Միութեան գործը ձախողեց, Վրթանէս յիշուում է վերջին անգամ Աբրահամի ընտրութիւնից մի տարի յետոյ 608 թուին: Այնուհետեւ ոչ մի լուր: Յովհաննէս Մամիկոնեան պատմում է որ Աբրահամ ուղարկեց Կիրիւնի մօտ միութեան գործով կոմստասին: Աբրահամ կաթողիկոսը մեռաւ 610-611 թուին, երեք թէ չորս տարի իշխելուց յետոյ (Ի՞նչ տարին ուղղելու է Գ կամ Դ): Կոմստասի երեւան գալը մի գերում, որ պատկանում էր տարիներէ ի վեր Վերթանէսին, ներշնչում է այն միտքը որ Վրթանէս այլեւս չկար, թողել էր այս աշխարհը: Երուսաղէմի գրաւումից յետոյ 614 թ. պարսկական արքունիքում մեծ ժողով գումարուեց գաւառաբանական խնդրի շուրջ: Հայ Եկեղեցու կողմից ներկայ էին Կոմսաս և Մատթէոս Եպիսկոպոսները: Դարձեալ Վրթանէս չկայ, մի լուսաւոր զուխ, որ իր փորձառութեամբ և տեսական պատրաստութեամբ ամենէն որակեալն էր ներկայանալու: Հայ Եկեղեցին միջազգային մի կառնուած որպիսին էր Տիգրանի ժողովը: Կասկածը, որ Վրթանէս մեռած էր, նոր ոյժ է ստանում: Վերջապէս հայապետական գահը 610/611 յետոյ քանի մի տարի թափուր է մնում և Կոմսաս ընտրուում է մեր հաշուով 616-617 թուին: Նորէն Վերթանէս չկայ: Այս դիտողութիւնները իրաւունք են տալիս մեզ ասելու որ Վրթանէս մեռած էր Կոմստասի ընտրութենէն տարիներ յաւաջ: Կարծեմ Հ. Ա. չէ արգիլել մեզ մեկնել երևոյթները, ինչպէս մենք ենք հասկանում և լուսաբանում առանց որբագրական աւերումների և այլ կարգի բանութիւնների:

Վերջացրինք մեր ասելիքը: Հ. Ա. «Պատասխան»ի մէջ դժբխտաբար չգրեալն է ոչ մի առողջ կէտ, որ մեր միտքը հանգչէր տեսնելով մի բան ճշտուած, մի թիւրբութեան վանած, մի սխալ ուղղուած: Սխալաշատ գրութիւն, որպիսին արժանի չէր ուղարկութեան որ մենք յատկացրինք եւ յատկացրինք միայն յարգելով, ինչպէս միշտ, հեղինակի անձը որ արտակարգ տոկոսունութեամբ և սիրով աշխատում է այն գաշտում որ մեզ այնքան մօտ է: Այդ յարգանքն է որ թելադրում է մեզ և մի վերջին նկատողութիւն: Հ. Ա. յայտարարում է որ ազատական լեզուի նկարագիրը նկատուելու և անոր առանձնայատկութիւնները զգալու համար, քաղցրութիւնն ճաշակելու համար, հարկ է ապրած ըլլալ դասական մատենագրութեան մէջ, սնուցած ըլլալ քիմք դասական ճաշակով: Պահանջը մը, առանց որոյ անկարելի է զանազանութիւնը զննել գասական և ոչ-գասական լեզուներու մէջ և որ Ն. Ադոնց չէ հետաքրքրուած դասական լեզուով: Կայ վարդ հոտաւէտ, նուազ հոտաւէտ եւ առաւել հոտաւէտ, տարբերութիւնը տեսութեամբ չենք կրնար դատել, վարժ հոտառութիւնը միայն կը զգայն:

Արդ, մեր կարծիքով, այս յայտարարութիւնը ամենատիուր յանձնարարականն է, ցաւալի վկայական, որ մի բանասէր կարող է ինքն իրեն տալ: Միխիթարեան հայկաբանութեան լուսափայլ աստղերը, սկսած Հ. Բազդբէր անմահ հեղինակներից, նոյնպէս սրած էին իրենց քիմքը, ոչ պակաս քան Հ. Ա., դասական վարդեր հոտաւելով: Բայց և այնպէս Նիշիչէ, Ռոբինացի, Փիլոն, անգամ Զենոր համարում էին Ե. դարու գրիչներ: Մեր ժամանակ, Հ. Հացունի, որ գուցէ աւելի քան Հ. Ա. սերտել է Ոսկերեքանի և Եփրեմի մեկնութիւնները, Նիշիչէ քաղելով իր ուսման քննիչի համար, ահա, լեզուական արգելք չէ տեսնում Ռոբինացին Ե. դարում թողնելու:

Աւելի լաւ է թողնել քիմքը, չվատահանալ հոտառութեան: Քիմքը աղբիւր է քմահաճութեան: Հնարներ և այլ ուղեցոյցներ, և առաջնորդութիւնք այլ սկզբունքներով: